ՇՊՀ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԱՂԱՓԱՐ_ԱՌԱՋԱՐԿԸ

1. **Գաղափար առաջարկի անվանումը**

   «Սովորի՛ր, լուսանկարի՛ր ու սիրի՛ր»

2. **Գաղափար առաջարկի կիրառման գիտության բնագավառը/մասնագիտությունը**

   Գիտության ցանկացած բնագավառ/ցանկացած մասնագիտություն

3. **Հիմնախնդիրն ու հիմնախնդրից բխող գաղափար առաջարկի համապարփակ նկարագիրը**

«ՇՊՀ» հիմնադրամի «Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնը (այսուհետ՝ **Կենտրոն**) ուսանողների հետ համատեղ նախաձեռնել է հայտարարել **«Սովորի՛ր, լուսանկարի՛ր ու սիրի՛ր» խորագրով լուսանկարչական մրցույթ**: Մրցույթի մասնակիցները ներկայացնելու են սեփական, հեղինակային լուսանկարները: Լուսանկարները պետք է իրականացվեն համալսարանի կամ նրա հարակից տարածքում: Մրցույթի յուրաքանչյուր մասնակից ներկայացնելու է 2 լուսանկար:

Մրցույթի նպատակը տեսանելի ձևով բուհական իրականության տարաբնույթ կողմերի ցուցադրումն է: Մենք հաճախ առաջնահերթ տեսնում ենք մեզ անմիջականորեն շրջապատող իրականության սև կամ բացասական երևույթները, մինչդեռ հավասարապես կարևոր է տեսնել սպիտակ կամ դրական կողմերը: Ավելին, նկատենք, որ սև ու սպիտակ գույների միջև կան բազմաթիվ այլ գույներ ևս: Միաժամանակ կարևոր է տեսնել այն, ինչն առաջին հայացքից այնքան էլ տեսանելի չէ, թաքնված է: Եվ, իհարկե, մեզ շրջապատող մարդկանց հետ իրականության ընկալումների բազմազանության ներկայացումը, անգամ հակադրություններով կիսումն ավելի քան կարևոր է:

Կատարված լուսանկարներն ուղարկվելու են էլեկտրոնային փոստով և Կենտրոնի կողմից ընտրված լավագույն լուսանկարների հեղինակները պարգևատրվելու են նվեր-գրքերով:

4. **Թիմի անդամների ինքնակենսագրականները և պոտենցիալ գործընկերների ցուցակը (Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներ և/կամ աշխատողներ, արտաքին կազմակերպություններ և/կամ անհատներ)**

   Թիմի անդամների ինքնակենսագրականները կցված են սույն փաստաթղթին:

   -

5. **Պոտենցիալ ֆինանսավորման աղբյուրների ցուցակը (անհատ(ներ), կազմակերպություն(ներ))**

Գաղափարի իրագործումն այս փուլում ֆինանսավորման կարիք չունի:

6. **Գաղափար-առաջարկի իրագործման պոտենցիալ արդյունքների համապարփակ նկարագիրը (առավելագույնը 200 բառ)**

Գաղափար-առաջարկի իրագործման արդյունքում ուսանողների մոտ՝

- զարգանում են լուսանկարչական հմտությունները,
- զարգանում է սոցիոլոգիական երևակայությունը,
- զարգանում է ստեղծարար մտածողությունը,
- բավարարվում է իրենց ինքնադրսևորման պահանջմունքը:

7. **Գործողությունների սկիզբն ու ավարտը՝**

   Գործողությունների սկիզբ - 15.05.21:

   Գործողությունների ավարտ - 30.07.21: